Դիմումների ընդունում. MIRAI Ծրագիր

19 Սեպտեմբեր, 2025

Ճապոնիայի կառավարությունն իրականացնում է MIRAI ծրագիրը (MIRAI: Mutual-understanding, Intellectual Relations and Academic Exchange Initiative), որի նպատակն է հրավիրել ապագայի խոստումնալից երիտասարդ առաջնորդների, հնարավորություն ընձեռնել սերնդակից ճապոնացի ուսանողների և հետազոտողների հետ մտավոր փոխանակման, խթանել Ճապոնիայի ավելի խորը ըմբռնումը, ինչպես նաև Ճապոնիայի և այլ երկրների միջև փոխըմբռնումը և բարեկամությունը:

Այս տարի ծրագիրը հրավիրում է 20-30 տարեկան ուսանողների (բակալավր, մագիստրատուրա) և երիտասարդ մասնագետների Կենտրոնական Ասիայից և Կովկասյան Տարածաշրջանից “Օրենքի Գերակայություն (Այցելություն Ճապոնիա)” թեմայի շրջանակում: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2025թ.-ի հոկտեմբերի 15-ը: Խնդրում ենք նախքան դիմելը ուշադիր կարդա՛լ ուղեցույցը, ինչպես նաև խրախուսում ենք մասնակցել ծրագրին:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ անկանխատեսելի հանգամանքներից ելնելով՝ ծրագիրը կարող է հետաձգվել, կամ դրա ժամանակացույցը և ձևաչափը կարող են փոփոխվել:

[Թեմա]
Օրենքի Գերակայություն (Այցելություն Ճապոնիա):
Մասնակիցները կայցելեն Տոկիո և հարակից քաղաքներ, կմասնակցեն քննարկումների մասնագետների հետ, կշփվեն ճապոնական համալսարանների ուսանողների հետ, ինչպես նաև կծանոթանան ճապոնական պատմությանն ու մշակույթին:

[Ծրագրի Ակնարկ]
https://jice.viewer.kintoneapp.com/public/mirai-appform2025

[Ժամանակացույց]
Հունվարի 14 (Չրք.) – Հունվարի 20 (Երք.), 2026 (փոփոխման ենթակա)

[Համապատասխանություն]

20-ից 30 տարեկան հայ բակալավրի, մագիստրոսական ուսանողներ և երիտասարդ մասնագետներ

[Ինչպես Դիմել]
Խնդրում ենք դիմել անգլերենով՝ ստորև նշված հղումով: Խնդրում ենք նախապես պատրաստել անհրաժեշտ փաստաթղթերը, օրինակ՝ անձնագիրը:
https://jice.form.kintoneapp.com/waiting/?_formCode=mirai2025-af

[Հարցերի Դեպքում]
Հանրային Կապերի և Մշակույթի Բաժին
Հայաստանում Ճապոնիայի Դեսպանություն
Հեռ: (+374) 11 52 30 10
Email: embjp@yv.mofa.go.jp